

Տիպը	Քաղաքականություն	Խմբագրությունը	Յոթերորդ
Ընդունող մարմինը	Բանկի խորհուրդ	Կարգավիճակը	Գործում է
Հաստատող ներքին իրավական ակտի տեսակը և համարը	Թիվ 69 արձանագրություն Թիվ 200 որոշում	Ընդունման վայրը	ք. Ստեփանակերտ
		Ընդունման ամսաթիվը	28.11.2014թ.
		Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	28.11.2014թ.
		Ուժը կորցնելու ամսաթիվը	

**«Արցախբանկ» ՓԲԸ
Խորհրդի նախագահ՝**

Հ. Կապրիեյան

**«ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ
ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ	ԳԼՈՒԽՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԷԶ
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
2.	ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
3.	ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ	9
4.	ՌԻՍԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՄԲԵՐԸ	12
5.	ՑԱԾՐ ՌԻՍԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ	14
6.	ՄԻՋԻՆ ՌԻՍԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՃ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ	15
7.	ԲԱՐՁՐ ՌԻՍԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	16
8.	ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՎԵԼՅԱԼ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ	17
9.	ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՏՇԱՃ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ	20
10.	ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ	21
11.	ԳՈՐԾԱՐՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԹԱՐՄԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ	22
12.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՎՈՒՄՆԵՐԸ. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	24
13.	ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԲԱՆԿԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԴԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ	25
14.	ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ/ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	27
15.	ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ	28
16.	ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ	29
17.	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	29
	Հավելված 1	30
	Հավելված 2	31
	Հավելված 3	32

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Արցախբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին քաղաքականությամբ (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանվում են Բանկում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ իրականացման նպատակով Բանկի հաճախորդների պատշաճ ուսումնասիրության, հաճախորդների և կատարվող գործարքների վերաբերյալ տվյալների հավաքագրման, դրանց հաշվառման, պահպանման և թարմացման պայմանները, հաճախորդների և դրանց կողմից կատարվող գործարքների՝ ըստ ռիսկայնության դասակարգման և Բանկի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործընթացում առաջացող ռիսկերի զսպմանն ուղղված գործողությունների իրականացման կարգն ու պայմանները:

1.2. Քաղաքականությունը մշակվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ/ԼՂՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ Լիազոր մարմին) կողմից սահմանված նորմատիվ իրավական ակտերի և Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա:

1.3. ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված սույն Քաղաքականությամբ չսահմանված դրույթները կարգավորվում են Օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով և Բանկի այլ ներքին իրավական ակտերով:

1.4. Քաղաքականությունն ուժի մեջ է մտնում Բանկի Խորհրդի կողմից հաստատման պահից:

1.5. Քաղաքականությունում լրացումներ և փոփոխություններ կատարվում են Բանկի Խորհրդի որոշմամբ՝ Բանկի վարչության առաջարկով և/կամ ՀՀ/ԼՂՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.6. Քաղաքականությունն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում Խորհրդի՝ 04.06.2012թ. թիվ 119 որոշմամբ հաստատված ««Արցախբանկ» ՓԲԸ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» քաղաքականությունը:

1.7. Քաղաքականությունը ծառայողական փաստաթուղթ է և հասանելի է Բանկի ողջ անձնակազմին:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2.1. Քաղաքականությունում կիրառվող հիմնական հասկացություններն են.

2.1.1. **Սպասարկող ստորաբաժանում** - Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանում, որն անմիջապես իրականացնում է հաճախորդների սպասարկում, կնքում է միանգամյա գործարք կամ հաստատում գործարար հարաբերություն.

2.1.2. **Գործարք** - Բանկի և հաճախորդի կամ լիազորված անձի միջև, ինչպես նաև հաճախորդի կամ լիազորված անձի և այլ անձանց միջև Բանկի միջոցով կատարված գործարք: Գործարք կարող է համարվել նաև որոշակի գործարքի հիման վրա կամ դրա արդյունքում իրավունքներ և պարտականություններ առաջացնող, փոփոխող կամ դադարեցնող յուրաքանչյուր գործողություն.

2.1.3. **Միանգամյա գործարք** - գործարք, որի արդյունքում պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում, և (կամ) որը գործարար հարաբերության հաստատում չի ենթադրում.

2.1.4. **Փոխկապակցված միանգամյա գործարքներ** - միևնույն կողմի մասնակցությամբ միատեսակ բնույթի միանգամյա գործարքներ, որոնք կատարվում են 24 ժամվա ընթացքում.

2.1.5. **Գործարար հարաբերություն** - հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններ, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով: Բանկի հետ գործարար հարաբերությունը չի ներառում Բանկի այն գործունեությունը, որի շրջանակներում Բանկի կողմից սեփական կարիքների համար իրականացվող գործունեությունը տարբերվում է բանկերի համար օրենքով սահմանված գործունեությունից.

2.1.6. **Հաճախորդը** - Բանկի հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձն է, ինչպես նաև այն անձը, որը Բանկին առաջարկում է կատարել կամ կատարում է միանգամյա գործարք.

2.1.7. **Իրական շահառու** - ֆիզիկական անձ, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունը իրականացվում է և (կամ) որին պատկանում է իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդը կամ այն անձը, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունն իրականացվում է: Իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում նաև այն ֆիզիկական անձը, որը փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը: Իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել նաև այն ֆիզիկական անձը, որը`

- քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի` ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ` բաժնետոմս) քսան և ավելի տոկոսին (բացառությամբ` «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները կամ

- հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ կամ

- գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված` ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

2.1.8. **Լիազորված անձը** - հաճախորդի հանձնարարությամբ և հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողությունների իրականացման լիազորություն ունեցող, այդ թվում` լիազորագրով կամ օրենքով սահմանված այլ հիմքով հաճախորդի կողմից տրված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձն է.

2.1.9. **Իրավաբանական անձը** - Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը կամ

հիմնարկն է, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող իրավաբանական կազմավորումը.

2.1.10. **Հաճախորդի գործարար բնութագիրը** - հաճախորդի գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, ինչպես նաև հաճախորդի գործունեությանը վերաբերող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ Բանկի տեղեկությունների (պատկերացումների) ամբողջությունն է.

2.1.11. **Գործարքի մյուս կողմը** - հաճախորդի կողմից իրականացվող գործարքի այլ մասնակից է, որը տրամադրում (փոխանցում) կամ որին հասցեագրվում է գործարքից բխող գույքը.

2.1.12. **Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը** - Բանկի կողմից հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու նպատակով նրա ինքնության և գործարար բնութագրի վերաբերյալ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ձեռք բերելու ու վերլուծության գործընթաց է, որը ներառում է՝

- հաճախորդի (այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի) նույնականացումը և ինքնության ստուգումը,

- գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի պարզումը,
- գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը.

2.1.13. **Ռիսկ** - փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վտանգավորության և դրա հավանականության մասին վկայող հանգամանք է, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ այլ չափանիշների.

2.1.14. **Բարձր ռիսկի չափանիշը** - ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքով, Լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին, այդ թվում՝

- քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ) հանդիսացող հնարավոր կամ առկա հաճախորդները կամ իրական շահառուները,

- անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում կամ բնակվում են չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից են,

- բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն:

Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում բարձր ռիսկի չափանիշի առկայությունը Լիազոր մարմնի նախատեսած դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ.

2.1.15. **Հաճախորդի հավելյալ ուսումնասիրությունը** - Բանկի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառումն է, որի դեպքում, ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, անհրաժեշտ է նաև առնվազն՝

- ստանալ ավագ ղեկավարության հավանությունը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում են այդպիսի չափանիշ,

- ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար,

- հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրել գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը,

- քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում իրականացնել ընթացիկ հավելյալ դիտարկում.

2.1.16. **Ցածր ռիսկի չափանիշը** - ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքով կամ լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ցածր հավանականության մասին, այդ թվում՝

- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները,

- պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, պետական կառավարչական հիմնարկները, բացառությամբ՝ չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվող մարմինների կամ կազմակերպությունների,

Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում ցածր ռիսկի չափանիշի առկայությունը լիազոր մարմնի նախատեսած դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ.

2.1.17. **Հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը** - Բանկի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառումն է, որի դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները՝

- ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

- իրավաբանական անձի համար՝ անվանումը և անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն),

- պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար՝ լրիվ պաշտոնական անվանումը.

2.1.18. **Քաղաքական ազդեցություն ունեցող անձը** - արտասահմանյան երկրի կամ տարածքի նախկին կամ գործող բարձրաստիճան պետական պաշտոնատար անձ է, որն իրականացրել կամ իրականացնում է պետական, քաղաքական կամ հանրային բնույթի նշանակալից գործառույթներ: Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց

շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի հանրային գործառույթներ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝

- պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,
- խորհրդարանի անդամները,
- բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,
- աուդիտորների դատարանի անդամները կամ կենտրոնական բանկի խորհրդի անդամները,
- դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,
- քաղաքական կուսակցության ակնառու գործիչները,
- պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները.

2.1.19. **Միջին ռիսկի չափանիշ** - հաճախորդներ և գործարքներ (գործարար հարաբերությունները), որոնք չեն համապատասխանում սույն Քաղաքականությունում ամրագրված բարձր և ցածր ռիսկի չափանիշներին.

2.1.20. **Չհամապատասխանող երկիրը կամ տարածքը** - Լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները չկիրառող կամ ոչ պատշաճ կիրառող արտասահմանյան երկիրը կամ տարածքն է.

2.1.21. **Կենսական շահերի կենտրոնը** - այն վայրն է, որտեղ կենտրոնացած են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահը կարող է դրսևորվել այն վայրում, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը և (կամ) նրա ընտանիքը, որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (մասնագիտական) գործունեության իրականացման վայրը.

2.1.22. **Ավագ ղեկավարությունը** --Ներքին դիտարկումների Ստորաբաժանում (այսուհետ՝ Ստորաբաժանում).

2.1.23. **Ներքին դիտարկումների մարմինը** - Բանկի Ներքին դիտարկումների Ստորաբաժանումն է (այսուհետ՝ Ստորաբաժանում).

2.1.24. **Կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը** - այն գործարքը կամ գործարար հարաբերությունն է, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից.

2.1.25. **Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը** - Լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հնարավորության մասին վկայող իրավիճակը կամ ազդակն է.

2.1.26. **Տիպաբանությունը** - լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված՝ փողերի լվացմանը կամ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գործողությունների և (կամ) քայլերի տրամաբանությունն ու հաջորդականությունը նկարագրող հնարավոր սխեմա է.

2.1.27. **Ահաբեկչության հետ կապված անձը** - ցանկացած անհատ ահաբեկիչ, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության փորձի մեջ կասկածվող, մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձ կամ ահաբեկչական կազմակերպություն է, նրանց հետ փոխկապակցված անձ, նրանց կողմից կամ նրանց անունից կամ նրանց ցուցումների ներքո գործող կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրանց պատկանող կամ նրանց կողմից կառավարվող այլ անձը, որը ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ լիազոր մարմնի հրապարակած ցանկերում.

2.1.28. **Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցումը** - կասկածելի գործարքի և (կամ) գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքն է.

2.1.29. **Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժումը** - գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողություններ չիրականացնելն է.

2.1.30. **Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցումը** - գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատումն է.

2.1.31. **Գույքի սառեցումը** - ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելքն է, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելքը, ինչպես նաև որևէ գործարար հարաբերության (ներառյալ՝ ֆինանսական ծառայությունների) կամ միանգամյա գործարքների հաստատման կամ իրականացման արգելքը.

2.1.32. **Արժեթուղթը** - Հայաստանի Հանրապետության/ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված արժեթղթերը, այդ թվում՝ պարտատոմսը, չեկը (չեկային գրքույկը), մուրհակը (վճարագիրը), բաժնետոմսը, կոնոսամենտը, բանկային վկայագիրը (բանկային գրքույկը, բանկային սերտիֆիկատը), պահեստային վկայագիրն է և այլ օրենքներով սահմանված արժեթղթերը.

2.1.33. **Կեղծ (shell) բանկը** - Բանկն է, որը հիմնադրված, գրանցված, լիցենզավորված կամ այլ կերպ ինկորպորացված լինելով որևէ երկրում, իրականում դրա տարածքում չի կառավարվում կամ չունի փաստացի գտնվելու կամ գործունեության վայր, և որը փոխկապակցված չէ արդյունավետ համախմբված վերահսկողության ենթակա, կարգավորվող գործունեություն իրականացնող ֆինանսական հաստատությունների որևէ խմբի հետ.

2.1.34. **Տարանցիկ հաշիվը** - Բանկում բացված այն թղթակցային հաշիվն է, որն ուղղակիորեն օգտագործում է թղթակից Բանկի հաճախորդը՝ իր անունից գործարքներ կատարելու համար.

2.1.35. **Գույք** – Գույք են համարվում ցանկացած տեսակի նյութական բարիքները, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտները, ներառյալ ֆինանսական (դրամական) միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, գույքային իրավունքները կամ շահերը հավաստող փաստաթղթերը կամ այլ միջոցները, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսները, շահութաբաժինները կամ այլ եկամուտները, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքները.

2.1.36. **Փողերի վլացումը** - հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում).

2.1.37. **Ահաբեկչության ֆինանսավորումը** - գույքի ուղղակի կամ անուղղակի, ցանկացած եղանակով տրամադրումը կամ հավաքագրումը՝ գիտակցելով, որ այն ամբողջությամբ կամ մասամբ պետք է օգտագործվի կամ կարող է օգտագործվել ահաբեկչության կամ անձին պատանդ վերցնելու կամ պատանդ պահելու, որը կատարվել է պատանդին ազատելու պայմանով պետությանը, կազմակերպությանը կամ քաղաքացուն որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից կամ ֆինանսական ծառայությունների մատուցումը՝ գիտակցելով, որ այդ ծառայություններն ուղղված են ահաբեկչության կատարմանը կամ անձին պատանդ վերցնելուն կամ պատանդ պահելուն, որը կատարվել է պատանդին ազատելու պայմանով պետությանը, կազմակերպությանը կամ քաղաքացուն որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ դրանց արդյունքներն օգտագործվելու են ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից:

2.2. Քաղաքականությունում կիրառվող հիմնական հապավումներն են.

ՀՀ Հայաստանի Հանրապետություն.

ԼՂՀ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

ՓԼ/ԱՖ՝ Փողերի վլացում և ահաբեկչության ֆինանսավորում:

3. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Բանկն ուղղորդվում է «Ճանաչիր քո հաճախորդին (KYC)» սկզբունքով, որը ենթադրում է, որ գործարք կատարելիս/ գործարար հարաբերություն հաստատելիս Բանկը տիրապետում է յուրաքանչյուր հաճախորդի ինքնության վերաբերյալ անհրաժեշտ

տեղեկատվությանը, պատկերացում ունի այն գործարքների տեսակի վերաբերյալ, որոնք հաճախորդը կատարում է և/կամ հավանական է, որ կկատարի:

3.2. Բանկը, հաճախորդի հետ որևէ միանգամյա գործարք կատարելիս կամ գործարար հարաբերություն հաստատելիս, նույնականացնում է հաճախորդներին և ստուգում նրանց ինքնությունը՝ իրավասու աղբյուրներից ստացված արժանահավատ ու վավեր փաստաթղթերի և այլ տեղեկատվության հիման վրա, ինչպես նաև իրականացնում հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, եթե՝

3.2.1. հաստատվում են գործարար հարաբերություններ,

3.2.2. կատարվում է միանգամյա գործարք (փոխկապակցված միանգամյա գործարքներ), այդ թվում ներպետական կամ միջազգային դրամական փոխանցում, որի գումարը հավասար է կամ գերազանցում է նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը,

3.2.3. կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերող՝ նախկինում ձեռք բերված տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ.

3.2.4. Կասկածներ են առաջանում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ:

3.2.5. Բանկը բացառիկ դեպքերում՝ կարող է Քաղաքականությամբ նույնականացման համար պահանջվող տեղեկությունների հիման վրա հաճախորդի ինքնությունը ստուգել նաև գործարար հարաբերություն հաստատելու կամ միանգամյա գործարք կատարելու ընթացքում կամ դրանից հետո ողջամիտ, բայց ոչ ավելի, քան յոթնօրյա ժամկետում, եթե ռիսկն արդյունավետորեն կառավարված է, և դա անհրաժեշտ է հաճախորդի հետ բնականոն գործարար հարաբերությունները չխափանելու նպատակով:

3.3. Հաճախորդներին նույնականացնելիս և ինքնությունը ստուգելիս՝

3.3.1. **Ֆիզիկական անձանց համար**՝ անձը հաստատող փաստաթղթի, ինչպես նաև բացառապես ֆիզիկական անձի լուսանկարով՝ պետական համապատասխան իրավասու մարմնի տված այլ վավեր պաշտոնական փաստաթղթերի հիման վրա պահանջվող տեղեկատվությունն առնվազն պետք է ներառի անձի՝

- անունը, ազգանունը,
- անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
- բնակության վայրը/հաշվառման հասցեն(առկայության դեպքում)
- ծննդյան ամսաթիվը, վայրը,
- քաղաքացիությունը

Ա/Ձ դեպքում՝ նաև

- հաշվառման համարը,
- հարկ վճարողի հաշվառման համարը,
- օրենքով սահմանված այլ տեղեկություններ.

3.3.2. **իրավաբանական անձանց համար** պահանջվող տեղեկատվությունը պետք է առնվազն ներառի իրավաբանական անձի՝

- անվանումը, գտնվելու վայրը,
- անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը),
- գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը

- առկայության դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը
- օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

3.3.3. պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի համար

պահանջվող տեղեկատվությունը պետք է առնվազն ներառի պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի լրիվ՝

- պաշտոնական անվանումը և երկիրը

3.4. Սպասարկող ստորաբաժանումների հաճախորդ սպասարկող աշխատակիցները, միանգամյա գործարք (գործարար հարաբերություն) հաստատելիս, ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ՝ պարզելու թե արդյոք հաճախորդը հանդես է գալիս իր կամ այլ անձի անունից և (կամ) օգտին և պարզում է՝

3.4.1. Լիազորված անձի առկայությունը և առկայության դեպքում, նույնականացնում է վերջինիս տվյալները, ստուգում է նրա ինքնությունը և հաճախորդի անունից հանդես գալու նրա լիազորությունը և իրականացնում է պատշաճ ուսումնասիրություն,

3.4.2. Իրական շահառուի առկայությունը և առկայության դեպքում, նույնականացնում է վերջինիս տվյալները, ստուգում է նրա ինքնությունը և իրականացնում է պատշաճ ուսումնասիրություն,

3.5. Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում, Սպասարկող ստորաբաժանումների հաճախորդ սպասարկող աշխատակիցները, հաճախորդի իրական շահառուին պարզելու նպատակով լիարժեք տեղեկատվություն են հավաքագրում այդ իրավաբանական անձի (բացառությամբ՝ արժեթղթերի շուկայի կարգավորման օրենսդրությամբ նախատեսված հաշվետու թողարկողների) մասնակիցների և կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ:

3.6. Հաճախորդի նույնականացման ընթացքում ձեռք բերված տեղեկությունները, ինչպես նաև, հաճախորդի գործարար բնութագիրը, գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը ստուգվում են Սպասարկող ստորաբաժանումների հաճախորդ սպասարկող աշխատակիցների կողմից:

3.7. Ստուգումը կարող է չներառել նույնականացնող բոլոր տեղեկությունները, սակայն պետք է բավարար լինի հաճախորդի իրական ինքնությունը պարզելու համար: Այդ նպատակով Բանկը կարող է օգտագործել ինչպես փաստաթղթային, այնպես էլ ստուգման այլ մեթոդներ:

3.8. Բանկի համար հաճախորդի նույնականացման և տեղեկությունների իսկության ստուգման ժամանակ կարող են հիմք ծառայել այլ անձանց, մասնագիտացված միջնորդների կամ երրորդ անձանց ներկայացնելու իրավասություն ունեցող անձանց կողմից հաճախորդի նույնականացման և տեղեկությունների իսկության ստուգման արդյունքում ստացված տվյալները՝ բավարար միջոցներ ձեռնարկելով հավաստիանալու համար, որ այլ ֆինանսական հաստատությունը կամ ոչ ֆինանսական հաստատությունը կամ անձը՝

ա. իրավասու է և կարող է ըստ պահանջի անմիջապես տրամադրել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները, ներառյալ՝ փաստաթղթերի պատճենները,

բ. փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից ենթակա է պատշաճ կարգավորման ու վերահսկողության, ինչպես նաև Օրենքով և դրա հիման

վրա ընդունված իրավական ակտերով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և տեղեկությունների պահպանման արդյունավետ ընթացակարգեր,

գ. չի գտնվում կամ բնակվում չհամապատասխանող երկրում կամ տարածքում կամ չհամապատասխանող երկրներից կամ տարածքներից չէ:

3.9. Հաճախորդի նույնականացման և գործարար բնութագրին վերաբերվող առկա տվյալները՝ հարցման դեպքում, Բանկը ներկայացնում է Լիազոր մարմին՝ 10-օրյա ժամկետում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ:

3.10. Սույն գլխի դրույթները կիրառվում են նաև լիազորված անձի և/կամ իրական շահառուի առկայության դեպքում:

4. ՌԻՍԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՄԲԵՐԸ

4.1. ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերի կանխման և ՓԼ/ԱՖ կանխարգելման գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով Բանկը հաճախորդների նկատմամբ կիրառում է տարբերակված յուրաքանչյուր հաճախորդի ռիսկայնության բնութագրին համարժեք մոտեցում:

4.2. Հաճախորդներին՝ ըստ ռիսկայնության խմբավորելով և յուրաքանչյուրի հանդեպ տարբերակված մոտեցում կիրառելով Բանկը հնարավորինս արդյունավետ կառավարում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում հնարավոր ռիսկերը:

4.3. Ռիսկը գնահատվում է ըստ ռիսկը բնութագրող չափանիշի, իսկ մեկից ավելի չափանիշների առկայության դեպքում՝ դրանց համակցությամբ:

4.4. Սպասարկող ստորաբաժանումները, հաճախորդների կողմից նախապես ներկայացված նույնականացման և այլ տեղեկությունների և հետագայում դրանց գործունեության ուսումնասիրության և վերլուծության հիման վրա, դասակարգում են հաճախորդներին և գործարքները (գործարար հարաբերությունները)՝ ըստ ռիսկերի հետևյալ երեք խմբերի.

- ցածր ռիսկի հաճախորդներ և գործարքներ,
- միջին ռիսկի հաճախորդներ և գործարքներ,
- բարձր ռիսկի հաճախորդներ և գործարքներ:

4.5. Բարձր ռիսկի առկայությունն որոշվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում: Բարձր ռիսկայնության չափանիշները պարզելու և գնահատելու նպատակով Բանկի Սպասարկող ստորաբաժանումները.

- համադրում են հաճախորդին (այդ թվում՝ լիազորված անձին և իրական շահառուին) նույնականացնող տվյալները,

- համադրում են հաճախորդի գործարար բնութագիրը,
- պարզում են գործարար հարաբերության նպատակը,
- պարզում են հաճախորդի միանգամյա գործարքների բնույթը,
- գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը) իրականացնում են ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն:

4.6. Պատշաճ ուսումնասիրության ընթացքում Բանկը մեղմ մոտեցում է ցուցաբերում ցածր ռիսկային խմբերում ներառված՝

- Ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնց միջոցների ձևավորման հիմնական աղբյուր է հանդիսանում աշխատավարձը, կենսաթոշակը կամ հայտնի աղբյուրից ստացվող

սոցիալական նպաստը, երբ տվյալ գործարքի բնութագիրն էապես չի տարբերվում հաշվով սովորաբար կատարվող գործարքների բնութագրերից,

- Հաճախորդների նկատմամբ, որոնց ինքնության և իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը հանրորեն հասանելի է, և որոնց գործունեության նկատմամբ պետական մարմինների կողմից իրականացվում է վերահսկողություն,

- առանձին գործարքների նկատմամբ, որոնց իրականացման համար պահանջվում են աննշան գումարով միջոցներ (կոմունալ վճարումները, ապահովագրավճարները և այլն):

4.7. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ռիսկերի դասակարգման դեպքում հաշվի է առնվում

- երկրի կամ աշխարագրական ռիսկը,
- հաճախորդի ռիսկը,
- ապրանքի (ծառայության) ռիսկը և այլ:

4.8. Հաճախորդի հետ գործարք կատարելիս հաշվի են առնվում նաև ռիսկերի գործոնները, որոնք բնութագրական են առանձին հաճախորդի կամ գործարքի համար և կարող են ազդել դրանց գծով ռիսկերի ենթադրվող մակարդակի որոշման համար:

4.9. Ռիսկերի գործոնները կարող են ավելացնել կամ պակասեցնել որևէ հաճախորդի կամ գործարքի վերագրվող ռիսկը: Դրանց թվին են պատկանում

- հաճախորդի ինքնությամբ պայմանավորված վերջինիս ենթադրվող «նորմալ» և «ոչ նորմալ» վարքագիծը,

- բանկային հաշվի բացման նպատակը կամ գործարար հարաբերության տեսակը,
- կոնկրետ հաճախորդի կողմից հաշվին ներդրվող միջոցների ծավալը կամ իրականացվող գործարքի գումարը,

- գործարար հարաբերության տևողությունը և կանոնակարգվածությունը,
- երկրի կամ ծանոթ լինելու հանգամանքը, որը ներառում է տվյալ երկրի օրենքների, կանոնակարգերի և կանոնների իմացությունը,

- միջնորդ իրավաբանական անձանց կամ կառույցների օգտագործումը, որոնք չունեն ակնհայտ տնտեսական նպատակ կամ տրամաբանական հիմնավորում կամ անհարկիորեն բարդացնում են գործարքը կամ գործարար հարաբերությունը և հանգեցնում են թափանցիկության բացակայության:

4.10. Հաճախորդին կամ գործարքին վերագրած ռիսկի չափանիշները գործարքների (գործարար հարաբերությունների) ընթացքում, կախված հաճախորդի կողմից հետագա կատարվող գործարքների բնույթից, կարող են փոփոխության ենթարկվել:

4.11. Տվյալ փոփոխությունները կատարվում են Ստորաբաժանման և/կամ Սպասարկող ստորաբաժանման նախաձեռնությամբ:

4.12. Ելնելով հաճախորդի կողմից ռիսկի որոշակի խմբին պատկանելությունից, Բանկի հետ գործարք (գործարար հարաբերություն) հաստատելիս կիրառվում է հաճախորդների ուսումնասիրության հետևյալ ձևերից մեկը`

- պարզեցված ուսումնասիրություն,
- պատշաճ ուսումնասիրություն,
- հավելյալ ուսումնասիրություն:

5. ՑԱԾԻ ՌԻՍԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Ցածր ռիսկի չափանիշներ են ներքոթվարկյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները, բացառությամբ՝ չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվող մարմինների կամ կազմակերպությունների.

- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները,
- պետական մարմինները,
- տեղական ինքնակառավարման մարմինները,
- պետական ոչ առևտրային կազմակերպությունները,
- պետական կառավարչական հիմնարկները,
- կյանքի ապահովագրության պայմանագրերը, որոնց դեպքում տարեկան ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը կամ միանվագ ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը,
- կենսաթոշակային համակարգերի շրջանակում կնքված ապահովագրական պայմանագրերը, եթե դրանք չեն պարունակում հրաժարման մասին դրույթ, և պայմանագիրը չի կարող օգտագործվել որպես գրավի առարկա,
- Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքի բյուջե կատարվող վճարումները,
- հանրային ծառայությունների դիմաց կատարվող վճարումները,
- աշխատավարձի, կենսաթոշակի կամ հայտնի աղբյուրներից ստացվող սոցիալական նպաստների հետ կապված վճարումները:
- առկա են միայն ցածր ռիսկի չափանիշներ,
- առկա է միջին (ստանդարտ) կամ բարձր ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է սույն գլխով նախատեսված ցածր ռիսկի գործարք, որի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

5.2. Տարբեր ռիսկերի համար բնութագրական մի քանի չափանիշների միաժամանակ առկայության դեպքում ռիսկը գնահատվում է առկա չափանիշներից առավել բարձր ռիսկայինին համապատասխան:

5.3. Հաճախորդի հետ գործարար հարաբերության ընթացքում, ռիսկի որևէ նոր չափանիշ ի հայտ գալու դեպքում, Սպասարկող ստորաբաժանումները վերանայում են տվյալ ռիսկի գնահատումը՝ ձեռնարկելով նոր որոշված ռիսկին համապատասխան հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ:

5.4. Ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում Սպասարկող ստորաբաժանումները իրականացնում են պարզեցված ուսումնասիրություն:

5.5. Հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը ներառում է սույն Քաղաքականության 3-րդ գլխով սահմանված նույնականացման համար անհրաժեշտ տեղեկությունների պարզումը և հաշվառումը, իրավաբանական անձանց դեպքում նաև Բանկային հաշիվները տնօրինելու իրավասություն ունեցող անձանց նույնականացնող տվյալները:

5.6. Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդի հետ գործարքների դիտանցման նպատակով Բանկը ցածր ռիսկի դեպքում կարող է ձեռնարկել հետևյալ նվազեցված միջոցառումները.

- ստուգել գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ հիմք ընդունելով հաճախորդի տրամադրած տեղեկատվությունը,

- համադրել հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները միայն այն դեպքում, երբ դրանք գերազանցում են հաճախորդի գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,

- պարզել հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել միջին (ստանդարտ) կամ բարձր ռիսկայնության հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների հետ կապեր:

5.7. Ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում Ստորաբաժանումը դիտանցումներ չի իրականացնում:

6. ՄԻՋԻՆ ՌԻՍԿԻ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱԾ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում Սպասարկող ստորաբաժանումների կողմից, իրականացվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն:

6.2. Գործարար հարաբերությունում հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելիս Բանկում ստորաբաժանումներին տրված իրավասությունների շրջանակներում նվազագույնը՝

6.2.1. ստուգվում է գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարվում են հարցումներ իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,

6.2.2. համադրվում են հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,

6.2.3. պարզվում են հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,

6.2.4. ստուգվում են գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը հաճախորդի գործարար բնութագրին,

6.2.5. անհրաժեշտության դեպքում՝ պարզվում է հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը,

6.2.6. ձեռնարկվում են ներքին իրավական ակտերով սահմանված այլ միջոցառումներ:

6.3. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացը ներառում է հաճախորդին (այդ թվում՝ լիազորված անձին և իրական շահառուին) նույնականացնելը և նրա ինքնությունը ստուգելը, գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելը, ինչպես

նաև գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը) ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը:

6.4. Սպասարկող ստորաբաժանումները գործարար հարաբերության ամբողջ ընթացքում իրականացնում են պատշաճ ուսումնասիրություն: Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը ներառում է Սպասարկող ստորաբաժանումների կողմից հաճախորդի հետ գործարքների դիտանցումը՝ հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկությունների հավաստիության, այդ տեղեկությունների հետ հաճախորդի գործունեության համադրելիության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով:

7. ԲԱՐՃՐ ՌԻՍԿԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

7.1. Բարձր ռիսկի չափանիշը այն չափանիշն է, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին:

7.2. Ռիսկը գնահատվում է բարձր այն դեպքում, երբ առկա է բարձր ռիսկի թեկուզ մեկ չափանիշ՝ բացառությամբ սույն Քաղաքականությամբ նախատեսված դեպքի:

7.3. Բարձր ռիսկի չափանիշներն են.

- անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում կամ բնակվում են չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից են,

- քաղաքական ազդեցություն ունեցող անձինք, նրանց ընտանիքի անդամները կամ նրանց հետ այլ կերպ փոխկապակցված անձինք (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ) հանդիսացող հնարավոր կամ առկա հաճախորդները կամ իրական շահառուները,

- բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն,

- բարեգործական և շահույթ չհետապնդող կազմակերպությունները

- իրավաբանական անձինք կամ կազմավորումները, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է,

- անվանական բաժնետերեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր ունեցող ընկերությունները,

- կանխիկի լայնամասշտաբ կիրառությամբ բնութագրվող բիզնեսները և գործարար հարաբերությունները,

- սեփականատերերի արտասովոր կամ անհարկի բարդ կազմ ունեցող ընկերությունները,

- անհատականացված բանկային ծառայությունների մատուցումը,

- առանց առերես շփման գործարքը կամ գործարար հարաբերությունը,

- Օրենքով, ԿԲ ուղեցույցներով կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված բարձր ռիսկի այլ չափանիշներ:

7.4. Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում բարձր ռիսկի չափանիշի առկայությունը կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ:

8. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՎԵԼՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում Սպասարկող ստորաբաժանումների աշխատակիցները հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելիս կամ միանգամյա գործարք կնքելիս իրականացնում են հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն:

8.2. Հավելյալ ուսումնասիրություն իրականացվում է նաև այն դեպքերում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության ընթացքում բացահայտվում կամ ի հայտ է գալիս բարձր ռիսկի չափանիշ:

8.3. Բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում Բանկը (Սպասարկող ստորաբաժանումների աշխատակիցները) իրականացնում է (են) հաճախակի և խորացված միջոցառումներ:

8.4. Բանկը, միանգամյա գործարք (գործարար հարաբերություն) հաստատելիս, հաճախորդի հավելյալ ուսումնասիրության նպատակով հիմնավոր պարզաբանումներ և բացատրություններ է պահանջում հաճախորդից՝ գործարքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար:

8.5. Հավելյալ ուսումնասիրություն իրականացնելիս Բանկը (Հաճախորդ սպասարկող աշխատակիցը) նվազագույնը՝

8.5.1. ստանում է ավագ ղեկավարության* հավանությունը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում է այդպիսի չափանիշ,

8.5.2. հնարավորինս համալիր և առավել ամբողջական ձևով ստուգվում է հաճախորդի հետ գործարար հարաբերություններ հաստատելու համար պահանջվող փաստաթղթերի (տեղեկությունների) իսկությունը, պահանջվում են հիմնավորող այլ փաստաթղթեր (տեղեկություններ), ինչպիսիք են.

- պայմանագրեր,
- հաշիվ-ապրանքագրեր,
- տեղեկանքներ,
- մաքսային հայտարարագրեր,
- գործարքի բնույթից կախված այլ փաստաթղթեր:

8.5.3. ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար,

8.5.4. հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրում է գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը:

8.6. Սպասարկող ստորաբաժանումների աշխատակիցները բարձր ռիսկի չափանիշի դեպքում գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության ամբողջ ընթացքում իրականացնում են խորացված միջոցառումներ՝

* Ավագ ղեկավարություն- Ներքին դիտարկումների ստորաբաժանում:

- ստուգում են գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը՝ պահանջելով նաև լրացուցիչ տեղեկատվություն (ներառյալ՝ փաստաթղթեր):

- համադրում են հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,

- պարզում են հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,

- ստուգում են գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը հաճախորդի գործարար բնութագրին,

- անհրաժեշտության դեպքում՝ պարզում են հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը և անհրաժեշտության դեպքում պահանջում դրանց օրինականությունը հիմնավորող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ,

- ձեռնարկում են ներքին իրավական ակտերով սահմանված այլ միջոցառումներ:

8.7. Ներքին դիտարկումների ստորաբաժանումն, ի լրումն 8.5 կետում սահմանված միջոցառումների, անհրաժեշտության դեպքում,

- կատարում է հարցումներ իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին՝ օգտվելով տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից,

- հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս կատարում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում՝ հնարավոր անուղղակի կապերը բացահայտելու նպատակով:

8.8. Եթե հաճախորդը ՀՀ քաղաքացի կամ ռեզիդենտ չէ, ապա, մինչև հաճախորդի հետ գործարար հարաբերության մեջ մտնելը, Սպասարկող ստորաբաժանումը (պատասխանատու աշխատակիցը) Ներքին դիտարկումների ստորաբաժանմանն է ներկայացնում հաճախորդի վերաբերյալ հավաքագրված տեղեկությունները՝ պարզելու համար հաճախորդի քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ որպես այդպիսին հանդիսացող անձի ընտանիքի անդամ կամ նրա հետ փոխկապակցված այլ անձ հանդիսանալը:

8.9. Ներքին դիտարկումների ստորաբաժանումը, Սպասարկող ստորաբաժանումների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա, պարզում է հաճախորդի քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ նրա հետ փոխկապակցված անձ հանդիսանալու փաստը՝ «Accuity» միջազգային կազմակերպության տեղեկատվական շտեմարանով:

8.10. Այն դեպքում, երբ պարզ է դառնում հաճախորդի քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ նրա հետ փոխկապակցված անձ հանդիսանալը, Ներքին դիտարկումների ստորաբաժանման ղեկավարն անմիջապես հայտնում է այդ մասին Բանկի Վարչության նախագահին և Սպասարկող ստորաբաժանման ղեկավարին:

8.11. Քաղաքական ազդեցություն ունեցող անձի ի հայտ գալու դեպքում հաճախորդ սպասարկող ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը, մինչև գործարար հարաբերության մեջ մտնելը, ձեռնարկում է հետևյալ քայլերը՝

- հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն եղել է կամ դառնում է քաղաքական ազդեցություն ունեցող անձ, գործարար հարաբերությունը

շարունակելու համար, դիմում է Ստորաբաժանմանը՝ վերջինիս հավանությունը ստանալու նպատակով,

- ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող հաճախորդի կամ իրական շահառուի եկամուտների (ունեցվածքի) և ֆինանսական միջոցների աղբյուրը պարզելու համար,

- իրականացնում է գործարար հարաբերությունների ընթացիկ հավելյալ ուսումնասիրություն:

8.12. Հաճախորդ սպասարկող ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը, հաճախորդի (լիազորված անձի) հետ գործարար հարաբերություն հաստատելուց կամ միանգամյա գործարք կատարելուց առաջ, բարձր դիսկի չափանիշի առկայության դեպքում, իրական շահառուի առկայությունը (առկայության դեպքում ինքնությունը) պարզում է հաճախորդի (լիազորված անձի) հայտարարության հիման վրա (Հավելված 1):

8.13. Գործարար հարաբերության ընթացքում հայտարարության ձևը լրացվում (փոփոխվում) է միայն իրական շահառուի ի հայտ գալու կամ իրական շահառուի փոփոխության դեպքում:

8.14. Եթե հաճախորդն օտարերկրյա իրավաբանական անձ է կամ օտարերկրյա ֆիզիկական անձ կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձ, ապա Սպասարկող ստորաբաժանման աշխատակիցը պարտավոր է պարզել և գրառել նաև այդ անձի կենսական շահերի կենտրոնը (Հավելված 2):

8.15. Առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելիս կամ գործարքներ կնքելիս Բանկում բավարար միջոցներ են ձեռնարկվում հավաստիանալու, որ այլ ֆինանսական հաստատությունը կամ ոչ ֆինանսական հաստատությունը կամ անձը՝

- կարող է ըստ պահանջի անմիջապես տրամադրել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները, ներառյալ՝ փաստաթղթերի (պայմանագրերը, վճարումների ստացականներ կամ այլ հիմնավորող փաստաթղթեր) պատճենները,

- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից ենթակա է պատշաճ կարգավորման ու վերահսկողության, ինչպես նաև ունի Օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և տեղեկությունների պահպանման արդյունավետ ընթացակարգեր՝ (ֆինանսական հաստատությունների դեպքում),

- չի գտնվում կամ բնակվում չհամապատասխանող երկրում կամ տարածքում կամ չհամապատասխանող երկրներից կամ տարածքներից չէ,

- հաշվարկները կատարում է միայն անկանխիկ եղանակով, բացառությամբ՝ վճարային տերմինալների, բանկոմատների միջոցով իրականացվող կանխիկ վճարումների:

8.16. Հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն իրականացնելիս Սպասարկող ստորաբաժանումները պետք է հիմնավոր պարզաբանումներ և բացատրություններ ստանան՝ տվյալ հաճախորդի, նրա հետ գործարար հարաբերությունների ու միանգամյա գործարքների մասին իրական ու ամբողջական պատկերացում կազմելու համար:

8.17. Եթե Սպասարկող ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը ձեռնարկված միջոցառումների արդյունքում իրական ու ամբողջական պատկերացում չի կազմում

հաճախորդի կամ վերջինիս գործունեության վերաբերյալ, ապա քննարկվում է այդ դեպքի՝ որպես կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու անհրաժեշտությունը Ներքին դիտարկումների ստորաբաժանման հետ:

8.18. Ստորաբաժանումը լրացուցիչ դիտանցում է իրականացնում բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքների (գործարար հարաբերությունների) նկատմամբ, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքների (գործարար հարաբերությունների) նկատմամբ, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն Բանկի համար անհայտ են և այնպիսի նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող գործարքների (գործարար հարաբերությունների) նկատմամբ, որոնք խոչընդոտում են այդ գործարքների (գործարար հարաբերությունների) բացահայտման գործընթացը:

9. ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՏՇԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

9.1. Բանկում գործարար հարաբերության ամբողջ ընթացքում իրականացվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն: Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում Բանկի Սպասարկող ստորաբաժանումների, անհրաժեշտության դեպքում նաև Ստորաբաժանման կողմից իրականացվում է հաճախորդի/գործարքների դիտանցում հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկությունների հավաստիություն, այդ տեղեկությունների հետ հաճախորդի գործունեության համադրելիություն, իսկ անհրաժեշտության դեպքում նաև հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով:

9.2. Բանկում գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում դիտանցումը կատարվում է գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը):

9.3. Հաճախորդի պատշաճ և հավելյալ ուսումնասիրության գործառույթներն իրականացվում են Սպասարկող ստորաբաժանման աշխատակցի կողմից՝ հետևյալ պարբերականությամբ. առնվազն

- տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,
- վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում,
- երեք ամիսը մեկ անգամ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում:

9.4. Հաճախորդի պատշաճ (այդ թվում հավելյալ կամ պարզեցված) ուսումնասիրության շրջանակում հավաքագրված տեղեկությունները Բանկում թարմացվում են Սպասարկող ստորաբաժանման աշխատակցի կողմից՝ առնվազն

- տարին մեկ անգամ՝ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,
- վեց ամիսը մեկ անգամ՝ բարձր ռիսկի դեպքում,
- երեք ամիսը մեկ անգամ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում,
- երկու տարին մեկ անգամ՝ ցածր ռիսկի դեպքում:

9.5. Բանկի Սպասարկող ստորաբաժանումների կողմից առնվազն տարին մեկ անգամ (անհրաժեշտության դեպքում ավելի հաճախակի) թարմացվում են գործարքի (գործարար հարաբերության) իրականացման ընթացքում հաճախորդի (այդ թվում լիազորված անձի և իրական շահառուի) նույնականացման արդյունքում ստացված տվյալները:

10. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1 Սպասարկող ստորաբաժանումները, հաճախորդների համար հաշիվներ բացելիս, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով հաճախորդներից պահանջում են նվազագույնը հետևյալ փաստաթղթերը[†].

10.1.1. իրավաբանական անձանց դեպքում՝

- կանոնադրությունը,
- պետական գրանցման վկայականը,
- լիցենզիան (առկայության դեպքում),
- հարկ վճարողի հաշվառման համարը,
- ղեկավարի և կազմակերպության անունից հանդես գալու իրավունք ունեցող անձանց

նշանակման հիմքերը և անձնագրերը,

- փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ,
- օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

10.1.2. անհատ ձեռնարկատերերի դեպքում՝

- ԱԶ հանդիսացող ֆիզիկական անձի անձնագիրը,
- բնակության վայրը,
- փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ,
- պետական գրանցման վկայականը,
- հարկ վճարողի հաշվառման համարը,
- օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

10.1.3. ֆիզիկական անձանց համար՝

- անձնագիրը,
- բնակության վայրը,
- փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ,
- օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

10.2 Սպասարկող ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը, ֆինանսական կամ այլ գործառնությունների կատարման ընթացքում, հաճախորդից, հաճախորդի պարտատերերից և/կամ այլ անձանցից կարող է պահանջել.

- ֆինանսական կամ այլ գործառնությունների կողմերի ինքնությունը հավաստող փաստաթղթեր կամ վերջիններիս վերաբերյալ հավաստի տեղեկություններ,

- ֆինանսական կամ այլ գործառնությունների նպատակը հիմնավորող փաստաթղթեր /պայմանագրեր, համաձայնագրեր, երկկողմանի գրագրություններ և այլն/,

- ֆինանսական կամ այլ գործառնությունների պայմանների՝ ձեռնարկատիրական գործունեության տվյալ բնագավառում սովորաբար կնքվող նման գործարքների պայմաններին կամ գործարար շրջանառության սովորույթներին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթեր /հավաստումներ, նախկինում կնքված պայմանագրեր և այլն/,

- ֆինանսական կամ այլ գործառնությունները կեղծ կամ շինծու չլինելու վերաբերյալ գործարքն իրականացնող աշխատակցի համար ընդունելի բացատրություններ ու պարզաբանումներ:

[†] Բանկում պահվում են փաստաթղթերի բնօրինակները կամ Բանկի աշխատակցի ներկայությամբ կամ օրենքով սահմանված կարգով վավերացված պատճենները:

10.3 Սպասարկող ստորաբաժանումները, դրամական փոխանցումներ իրականացնելիս, անկախ հաշվի բացման հանգամանքից՝ սույն Քաղաքականության 3-րդ գլխով սահմանված դեպքերում, պարզում և ստուգում են փոխանցումներ կատարողների ինքնությունը:

10.4 Անկախ հաշվի բացման հանգամանքից, ինքնությունը պարզելու և ստուգելու նպատակով Սպասարկող ստորաբաժանումները պահանջում և պահպանում են փոխանցում կատարողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

- անունը, ազգանունը,
- հաշվի համարը (բացակայության դեպքում՝ փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարը),
- անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
- բնակության կամ գտնվելու վայրը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը,
- գործարքի նպատակը:

10.5 Սույն գլխի 10.4 կետով նախատեսված տեղեկատվությունը, ներառյալ՝ փոխանցումը կատարողի հաշվեհամարը (բացակայության դեպքում՝ փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարը), ներառվում է փոխանցմանն ուղեկցող վճարման հանձնարարականում:

10.6 Բանկը պահպանում է սույն գլխով սահմանված և նույնականացման արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև հաշվի (բացակայության դեպքում՝ փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարի) վերաբերյալ տվյալներն ու գործարար նամակագրությունը առնվազն 5 տարի ժամկետով, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ ավելի երկար:

10.7 Հաճախորդի կողմից Սպասարկող ստորաբաժանումներին տրամադրվող տեղեկատվությունն ամրագրող փաստաթղթերը պետք է ունենան պահանջվող բոլոր վավերապայմանները:

10.8 Բանկում սույն գլխով սահմանված տեղեկատվությունը հավաքագրվում է այնպիսի եղանակով, որը հետագայում հնարավորություն կտա օգտագործել ստացված տեղեկությունները որպես ապացույց:

11. ԳՈՐԾԱՐՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԹԱՐՄԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Բանկը (Սպասարկող ստորաբաժանումները) թղթային կամ էլեկտրոնային տարբերակով, հաշվառում և պահպանում է (են), այդ թվում՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված, հետևյալ տեղեկատվությունը.

11.1.1. ներպետական և միջազգային գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները (ներառյալ՝ հաճախորդի (և գործարքի մյուս կողմի) անունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում) և բնակության (գտնվելու) վայրը, գործարքի բնույթը, կատարման ժամկետը, գումարը և արժույթը, առկայության դեպքում նաև՝ հաշվի տեսակը և հաշվեհամարը), որոնք բավարար կլինեն տվյալ գործարքի կամ գործարար հարաբերության ամբողջական պատկերը վերականգնելու համար.

11.1.2. կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև կասկածելի չորակված գործարքների կամ գործարար հարաբերությունների դիտարկման ընթացքի (կատարված վերլուծության) և արդյունքների վերաբերյալ տեղեկությունները.

11.1.3. դրամական փոխանցումների դեպքում նախատեսված տեղեկությունները.

11.1.4. սույն քաղաքականությանը սահմանված այլ տեղեկություններ:

11.1.5. հաճախորդի նույնականացման, այդ թվում հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները և 11.1 կետով սահմանված տեղեկատվությունը (ներառյալ փաստաթղթերը), գործարար հարաբերության ավարտից հետո կամ գործարքի կատարումից հետո, պահպանվում է առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ ավելի երկար ժամկետով,

11.2. Տեղեկատվությունը պահվում է թղթային և էլեկտրոնային եղանակներով՝ համակարգիչներում, էլեկտրոնային կրիչներում: Համակարգիչներում տեղեկատվության հաշվառումը կատարվում է դասակարգված տվյալների բազաների միջոցով:

11.3. Օրենքով սահմանված պահպանման ենթակա տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) հաշվառվում են: Հաշվառումը կատարվում է այնպես, որ անհրաժեշտության դեպքում հնարավորություն լինի վերականգնել այն աշխատակցի տվյալները, ով իրականացրել է հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը կամ պահպանման ենթակա տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) ձեռքբերմանն ուղղված այլ գործողությունները:

11.4. Բանկն ապահովում է հաշվառված ու պահպանվող տեղեկատվության անվտանգությունը, գաղտնիությունը և կանխում դրա չթույլատրված օգտագործումը, տնօրինումը:

11.5. Թարմացումները կատարվում են՝ հիմք ընդունելով Սպասարկող ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցների կողմից հաճախորդներից ստացված տեղեկատվությունը:

11.6. Սպասարկող ստորաբաժանումները պարտավոր են հավաքագրված փաստաթղթերը պահպանել հաճախորդի հետ գործարար հարաբերության ամբողջ ժամանակահատվածում, այնուհետև՝ 5 (հինգ) տարի ժամկետով, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ ավելի երկար՝ փաստաթղթային և/կամ էլեկտրոնային տարբերակներով:

11.7. Կասկածելի գործարքների (գործառնությունների), վերջիններիս դադարեցման և կասեցման վերաբերյալ տեղեկատվությունը կից հիմնավոր փաստաթղթերով հավաքագրվում և պահպանվում է Ստորաբաժանման կողմից:

11.8. Հաճախորդի պատշաճ (այդ թվում հավելյալ կամ պարզեցված) ուսումնասիրության շրջանակում հավաքագրված տեղեկությունները Բանկում թարմացվում են սույն քաղաքականության 9.4 և 9.5 կետերով սահմանված հաճախականությամբ:

11.9. Սույն քաղաքականության 11.7 կետում նշված փաստաթղթերը պահպանվում են 5 տարի ժամկետով, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ ավելի երկար, այնուհետև արխիվացվում են «Արցախբանկ» ՓԲԸ արխիվային գործի կազմակերպման մասին» կարգի համաձայն:

11.10. Սույն քաղաքականության 11.9 կետում նշված փաստաթղթերի տրամադրումն երրորդ անձանց իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

**12. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄՆԵՐԸ. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՄԱՆՄԱՆ ԱՅԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

12.1. Բանկում ՀՀ/ԼՂՀ օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններն իրականացվում են միայն Օրենքով և սույն Քաղաքականությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկությունները ստանալուց և Օրենքին, սույն Քաղաքականությանը համապատասխան գրառելուց հետո:

12.2. Սպասարկող ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը չի բացում, սպասարկում կամ տրամադրում անանուն կամ մտացածին անուններով թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ:

12.3. Դրամական փոխանցում իրականացնող աշխատակիցները ձեռք են բերում և պահպանում են հետևյալ տեղեկատվությունը՝

- փոխանցում կատարողի և փոխանցումն ստացողի անունը, ազգանունը կամ անվանումը,
- փոխանցում կատարողի և փոխանցումն ստացողի հաշիվների համարները (բացակայության դեպքում փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարը),
- փոխանցում կատարողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները՝ ֆիզիկական անձի համար, կամ անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն)՝ իրավաբանական անձի համար:

12.3.1. Բոլոր դրամական փոխանցումների դեպքում դրամական փոխանցումը ուղարկող աշխատակիցը 12.3 կետով նախատեսված տեղեկությունները ներառում է փոխանցմանն ուղեկցող վճարման հանձնարարականում:

12.3.2. Սույն գլխով նախատեսված պարտականությունները չեն կիրառվում՝

- ֆինանսական հաստատությունների միջև իրենց անունից կատարվող փոխանցումների և փոխհաշվարկների նկատմամբ,
- կրեդիտային, դեբետային կամ կանխավճարային քարտերով իրականացվող գործարքների նկատմամբ, եթե գործարքի կատարման և ձևակերպման (հաշվառման) համար հիմք հանդիսացող բոլոր հաղորդագրություններում (ուղեկցող գրագրությունում) առկա է այդ քարտերի համարների վերաբերյալ տեղեկատվությունը:

12.3.3. կրեդիտային, դեբետային կամ կանխավճարային քարտերով իրականացվող գործարքների նկատմամբ սահմանված բացառությունը վերաբերում է այն դեպքերին, երբ գործարքը կապված է ավտոմատ գանձման սարքերի միջոցով գումարների կանխիկացման, ապրանքների և ծառայությունների դիմաց վճարման հետ, և չի վերաբերում այն դեպքերին, երբ կրեդիտային, դեբետային կամ կանխավճարային քարտերն օգտագործվում են վճարումների որևէ համակարգում դրամական փոխանցումներ կատարելու համար:

12.4. Օրենքի, սույն Քաղաքականության, Բանկի այլ ներքին իրավական ակտերի պահանջների պահպանմամբ այլ բանկերի թղթակցային հաշիվների բացման և վարման, ինչպես նաև այլ բանկերում իր թղթակցային հաշիվների բացման և վարման առանձնահատկությունները սահմանվում են «Արցախբանկ» ՓԲԸ թղթակցային հաշիվների բացման, վարման և փակման» կարգով:

12.5. Օրենքի, սույն Քաղաքականության, Բանկի այլ ներքին իրավական ակտերի, պահանջների պահպանմամբ հաճախորդների բանկային հաշիվների բացման և վարման այլ առանձնահատկությունները սահմանվում են բանկային հաշիվների բացման և վարման հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերով:

12.6. Բանկը թղթակցային հաշիվներ չի բացում կեղծ («շել») բանկերում:

13. ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԲԱՆԿԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԴԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

13.1. Բանկի Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) և Բանկի Վարչությունը (այսուհետ՝ Գործադիր մարմին) պատասխանատու են ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին արդյունավետ համակարգի ձևավորման համար, ապահովում են դրա ընթացիկ աշխատանքն ու վերահսկողությունը:

13.1.1. Բանկի Խորհուրդը ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում՝

13.1.1.1. սահմանում է Բանկի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման քաղաքականությունը,

13.1.1.2. հաստատում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում Ներքին աուդիտի տարեկան ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները, հսկողություն է իրականացնում այդ ծրագրերի իրագործման նկատմամբ,

13.1.1.3. անհրաժեշտության դեպքում՝ Ներքին դիտարկումների ստորաբաժանմանը հանձնարարում է իրականացնել ՓԼ/ԱՖ կանխարգելման ուսումնասիրություններ, հաստատում է աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկում դրանց իրականացումը,

13.1.1.4. համաձայնություն է տալիս գործադիր մարմնի կողմից Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի նշանակման և ազատման վերաբերյալ,

13.1.1.5. հաստատում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտերը (այսուհետ՝ ներքին իրավական ակտեր),

13.1.1.6. քննարկում և հաստատում է կիսամյակը մեկ անգամ Ներքին դիտարկումների ստորաբաժանման 14.2 կետով նախատեսված հաշվետվությունները ինչպես նաև ներքին աուդիտի ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում հաշվետվությունները,

13.1.1.7. իրականացնում է Օրենքով, Քաղաքականությամբ և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

13.1.2. Բանկի Գործադիր մարմինը ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում՝

13.1.2.1. ապահովում է Խորհրդի սահմանած փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման քաղաքականության ներդրումը, ինչպես նաև դրա արդյունավետ իրականացումը,

13.1.2.2. ապահովում է ՓԼ/ԱՖ դեմ պայաքարի ոլորտում Բանկի քաղաքականության և քաղաքականության հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ամբողջական ու արդյունավետ կիրառումը և հսկողություն է իրականացնում դրա նկատմամբ,

13.1.2.3. Խորհրդի համաձայնությամբ՝ նշանակում և ազատում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին,

13.1.2.4. ապահովում է Բանկի աշխատակիցների՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում պատշաճ ուսուցումը,

13.1.2.5. կազմակերպում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման գործունեությանն անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովվածությունը,

13.1.2.6. ապահովում է ներքին դիտարկումների մարմնի՝ սույն քաղաքականության 14.1 կետով նախատեսված ուսումնասիրությունների և աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

13.1.2.7. իրականացնում է Օրենքով, Քաղաքականությամբ և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

13.2. Սպասարկող ստորաբաժանումները ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում՝

13.2.1. Ստորաբաժանմանը ներկայացնում են հաճախորդների հետ կնքվող գործարքների վերաբերյալ կասկածելի գործարքների հայտնաբերման նպատակով կատարված նախնական վերլուծություններ,

13.2.2. իրականացնում են ներքին իրավական ակտերով սահմանված՝ հաճախորդների նույնականացման տվյալների, հաճախորդների անունից կատարվող գործարքների հիմքերի նախնական հավաքագրում, ստուգում, հաշվառում, պահպանում և թարմացում,

13.2.3. Ստորաբաժանմանը ներկայացնում են գործարքների վերաբերյալ հավաքագրված տվյալները և պահանջվող այլ տեղեկատվություն,

13.2.4. Ստորաբաժանմանը ներկայացնում են ներքին իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ,

13.2.5. ներքին իրավական ակտերով սահմանված հաճախորդի/գործարքի ռիսկի չափանիշներին համաձայն իրականացնում են Բանկի հաճախորդների դասակարգում և հաշվառում,

13.2.6. կատարում են սույն Քաղաքականությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

13.2.7. Բանկի Սպասարկող ստորաբաժանումների ղեկավարները պատասխանատու են Ներքին դիտարկումների ստորաբաժանման ղեկավարի կամ Լիազոր մարմնի՝ գործարքի կասեցման և/կամ սառեցման վերաբերյալ որոշումների ժամանակին և/կամ պատշաճ չկատարման համար:

13.3. Ստորաբաժանման դերն ու գործառույթները ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում սահմանված են «Արցախբանկ» ՓԲԸ Ներքին դիտարկումների ստորաբաժանման» կանոնակարգով:

13.4. Ներքին աուդիտը՝ տարեկան ծրագրով նախատեսված հաճախականությամբ, ստուգումներ է իրականացնում՝ հավաստիանալու համար, որ Բանկի գործունեությունը համապատասխանում է Օրենքի, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին:

13.4.1. Սույն Քաղաքականության 13.4 կետում նշված ստուգումների արդյունքներով Ներքին աուդիտը Բանկի Խորհրդին և Գործադիր մարմնին ներկայացնում է հաշվետվություններ իր գնահատականների և բացահայտումների վերաբերյալ, ներառյալ՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով աշխատակիցների ուսուցման ու վերապատրաստման արդյունավետության վերաբերյալ իր եզրակացությունը:

13.4.2. Ներքին աուդիտը ընթացիկ կամ պլանային ստուգումների արդյունքում կասկածելի գործարքների և Օրենքի և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի պահանջների խախտումներ հայտնաբերելիս, մինչև ստուգումների վերաբերյալ արդյունքների համապատասխան իրավասու մարմիններին ներկայացնելը, նշված փաստերի վերաբերյալ հայտնում է Ստորաբաժանմանը՝ վերջինիս կողմից անհրաժեշտ միջոցառումների իրականացման ակնկալիքով:

13.5 Բանկը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության ներդրման և արդյունավետ կիրառման ընթացակարգերը վերստուգելու նպատակով հրավիրում է Արտաքին աուդիտ՝ Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

13.5.1 Բանկի կողմից Օրենքի ներդրման և արդյունավետ կիրառման ընթացքը վերստուգելու նպատակով հրավիրված Արտաքին աուդիտի կատարած եզրահանգումները (այդ թվում՝ Ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարման հաշվետվության համապատասխան բաժինը) ներկայացվում է Լիազոր մարմին՝ Խորհրդի հաստատելուց հետո մեկշաբաթյա ժամկետում:

14. ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ/ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14.1. Ստորաբաժանումը կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է կատարված գործարքների և հաստատված գործարար հարաբերությունների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ու աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը Բանկի կողմից սահմանված ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտերին:

14.2. Ուսումնասիրության արդյունքների, ինչպես նաև Լիազոր մարմին ներկայացված և մարմնի կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա ընթացքում հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին և Վարչության նախագահին:

14.3. Ստորաբաժանումը 14.2 կետով սահմանված հաշվետվության մեջ ներառվում է նաև.

14.3.1. պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների թիվը, կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը,

14.3.2. այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն որակվել կասկածելի,

14.3.3. Բանկի կասեցրած, իրականացումը մերժած կամ դադարեցրած գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը, յուրաքանչյուր կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության արժեքը,

14.3.4. սառեցված գույքի չափը,

14.3.5. Բանկի աշխատակիցների գործողությունների արդյունքում Օրենքի, սույն կանոնակարգի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքերը,

14.3.6. ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

14.3.7. Խորհրդի/Վարչության նախագահի պահանջով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

15. ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

15.1. Բանկի բոլոր աշխատակիցները պետք է իրազեկ լինեն ՓԼ/ԱՖ կանխարգելման գործընթացը կանոնակարգող Բանկի ներքին իրավական ակտերին:

15.2. Բանկում մշակվում և իրականացվում են ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ուսուցման ծրագրեր՝ «Արցախբանկ ՓԲԸ աշխատակիցների վերապատրաստման» կարգին համապատասխան:

15.3. Ուսուցման ծրագրերը նախատեսում են ուսուցում Խորհրդի անդամների, Գործադիր մարմնի, Ստորաբաժանման աշխատակիցների, հաճախորդների սպասարկման և աուդիտի գործառույթներ իրականացնող աշխատակիցների/ղեկավարների համար:

15.4. Նոր աշխատակիցների ընդունման դեպքում ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով ուսուցում կազմակերպվում է առաջին երեք ամիսների ընթացքում: Բանկի կադրերի և փաստաթղթաշրջանառության վարչությունը գրավոր տեղեկացնում է Ստորաբաժանմանը՝ ՓԼ/ԱՖ կանխարգելմանն առնչվող ստորաբաժանումներում նոր աշխատանքի ընդունված աշխատակիցների վերաբերյալ: Տեղեկացման մեջ նշվում է նոր աշխատակցի աշխատանքի ընդունման ամսաթիվը, ստորաբաժանումը, պաշտոնը:

15.5. Վերջիններիս ուսուցումը և վերապատրաստումը հնարավորություն է տալիս հավաստիանալու, որ նրանք ունեն ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների ու ընթացակարգերի վերաբերյալ պատշաճ գիտելիքներ, մասնավորապես՝

15.5.1. բարձր և ցածր ռիսկի չափանիշների, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության առավել հաճախ հանդիպող հիմքերի և չափանիշների վերաբերյալ, այդ թվում՝ Լիազոր մարմնի ուղեցույցներում նկարագրվող կասկածելի գործարքների տիպաբանությունների վերաբերյալ,

15.5.2. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն Քաղաքականության, Բանկի այլ ներքին իրավական ակտերի դրույթների վերաբերյալ:

15.6. Ստորաբաժանման (աշխատակիցների) աշխատանքի ընդունումն, ուսուցումն և վերապատրաստումն իրականացվում է՝ հաշվի առնելով Օրենքի, Լիազոր մարմնի խորհրդի կողմից հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի, ինչպես նաև ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերի պահանջները:

15.7. Բանկի կողմից իրականացվող ուսուցման ծրագրերը, դրանց վերաբերյալ բոլոր նյութերը, ինչպես նաև ուսուցման ծրագրերին մասնակցած անձանց անուններն ու ստորագրությունները Ստորաբաժանման կողմից հաշվառվում և պահպանվում են առնվազն 5 տարի: Ստորաբաժանման կողմից կազմակերպված դասընթացների վերաբերյալ տվյալները (դասընթացին մասնակցած անձանց անունները, ազգանունները, պաշտոնները, դասընթացի անցկացման ամսաթիվը, տևողությունը և անհրաժեշտության դեպքում այլ տվյալներ) ներկայացվում են նաև Բանկի Մեթոդաբանության, ռազմավարության և կադրերի վերապատրաստման վարչության Ռազմավարության և կադրերի վերապատրաստման բաժնին՝ «Արցախբանկ» ՓԲԸ աշխատակիցների վերապատրաստման» կարգով սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով:

15.8. Այն դեպքերում, երբ ուսուցումը կամ վերապատրաստումն անցկացվում է այլ կազմակերպություններում, դասընթացների մասնակիցը, դասընթացն ավարտելուց հնարավորինս սեղմ ժամկետում Ստորաբաժանմանը տրամադրում է հաշվետվություն՝ ըստ Հավելված 3-ի, որին կցվում են դասընթացի բոլոր նյութերը (առկայության դեպքում):

16. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

16.1. Բանկը պատասխանատու է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում Օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դրույթների պատշաճ կիրառության համար:

16.2. Բանկում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կանխարգելման ներքին արդյունավետ համակարգի ձևավորման, դրա ընթացիկ աշխատանքի ապահովման և վերահսկողության համար պատասխանատու են Բանկի Վարչությունը և Խորհուրդը:

16.3. Ստորաբաժանումը պատասխանատվություն է կրում Օրենքով և սույն Քաղաքականությամբ իրեն վերապահված գործառույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ Օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

16.4. Ստորաբաժանումը Քաղաքականության պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն է կրում Օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված կարգով:

16.5. Սույն Քաղաքականության պահանջների կիրառումն իրենց ստորաբաժանումների կողմից ապահովելու համար պատասխանատվություն են կրում Բանկի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները:

16.6. Սույն Քաղաքականությամբ պահանջվող տեղեկություններն հավաքագրելու, պահպանելու և Օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով տրամադրելու համար պատասխանատվություն են կրում սպասարկող ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցները:

16.7. Սույն Քաղաքականության պահանջները խախտելու համար ՓԼ/ԱՖ դեմ Բանկի կողմից իրականացվող միջոցառումներում ընդգրկված ստորաբաժանումների ղեկավարներն ու աշխատակիցները պատասխանատվություն են կրում օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

17. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1՝ Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարության օրինակելի ձև

Հավելված 2՝ Անձի կենսական շահերի կենտրոնի և եկամտի աղբյուրների վերաբերյալ լրացվող ձևաթերթ

Հավելված 3՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ուսուցման/վերապատրաստման մասին հաշվետվության օրինակելի ձև

« »

թ. _____

առ «__» «__» «_____թ.»

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ _____-ս, _____-թ. _____

_____ գործարար հարաբերության մեջ կամ միանգամյա գործարքում հանդես
գալով որպես _____, հայտարարում եմ, որ գործարար հարաբերության մեջ
կամ միանգամյա գործարքում իրական շահառու

առկա է: Իրական շահառու է հանդիսանում _____ը:

առկա չէ:

Պարտավորվում եմ նաև գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի
փոփոխության կամ շահառուի ի հայտ գալու դեպքում տեղյակ պահել _____
_____ին:

/ _____ //

Անուն, ազգանուն, հայրանուն

ստորագրություն

_____թ.

**ԱՆՁԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԵՎ ԵԿԱՄՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՎՈՂ ՁԵՎԱԹՈՒՂԹ**

Ազգանուն Անուն Հայրանուն

անձը հաստատող փաստաթղթի սերիա, համար, երբ և ում կողմից է տրված

Եկամտի աղբյուրներ (ամսական)

	մինչև 400 հզ. ՀՀ դրամ	401-1000 հզ. ՀՀ դրամ	1 մլն-ից ավել ՀՀ դրամ
Շահութաբաժին			
Աշխատավարձ			
Տոկոսագումարներ, վարձավճարներ			
Այլ, նշել			

Կենսական շահերի կենտրոն*

Չափանիշներ	Գտնվելու վայր (Երկիր, Նահանգ/մարզ/տարածք, քաղաք/գյուղ)
Բնակելի տուն (բնակարան)	
Հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեություն	

* Կենսական շահերի կենտրոն` այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը կամ նրա ընտանիքը, և որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

Հաճախորդի անուն, ազգանուն ----- ստորագրություն -----

«___» «___» «_____»թ. »
ամսաթիվ ամիս տարեթիվ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ / ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ
(ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում)

.....
(ուսուցումը/վերապատրաստումը կազմակերպող անձ/կազմակերպություն)

.....
(մասնակիցներ՝ անուն, ազգանուն, անձնագրի տվյալները)

.....
(ստորաբաժանում, ժամանակահատված)

.....
(ուսուցման/վերապատրաստման ծրագիր, թեմա*)

Այլ.....

.....
Ուսուցման/վերապատրաստման մասնակցի
(ստորագրություն) -----

.....
Ստորաբաժանման ղեկավարի
(տարածքային/կառուցվածքային)

(ստորագրություն)

ամսաթիվ

*** Ծրագրերը և թեմաները կցվում են սույն հաշվետվությանը և պահպանվում են առնվազն 5 տարի**